հազար հոգի, չորս նահանգներ կարողացել են միաբանուել բոլոր պարսկաստանի դէմ:

Ահա ինչ յիշատակութիւններ է արթնացնում Աւարայրի դաշտը:

Նորա վերայ եղած ճակատամարտը հաստատում է, որ հայերը ոչինչ միութեան կապ չեն ունեցել և ոչ կրօնն է կարողացել կապել այդ ընկերավարական սիրուց զրկված ցեղերով բաժանեալներին:

Ես յոյս կորել էի ժողովրդական աւանդութիւններից օգուտ քաղել. բայց հակառակ իմ յուսահատութեանը ես զարմանքով գտայ հայոց պատմական աւանդութիւնները թաթարների մէջ մնացած: Աւաջուղի Քիլիսաքեանդի բնակիչները իւրեանց գիւղի եկեղեցւոյ հնութեան թուականը հաստատում էին 1500 տարուան, որի արևելեան և արևմտեան կամարները դեռ կանգուն մնում են: Ինձ ցոյց տուին Խարաբայ խաչի, Սաղէլի, Խաչլուի աւերակ եկեղեցիները և ընդարձակ գերեզմանատները:

Պէտք է յիշել որ Մադուայ, Աւաջուղի, Գարայնիի բոլոր թաթարաբնակ գիւղերում եկեղեցիներ կան, բոլորն էլ աւերված: Լեռներում, դետերի ափերին կառուցած են վանքեր մատուռներ: Խակ խաչարձաններ, խաչեր այնքան բազմաթիւ են, որոնք թէև թաթարները անհետացնելու մտաք խորտակում, փշրում են, բայց մինչև յաւիտեան էլ եթէ շարունակէին, հայոց քրիստոնէական կնիքը